



**ՆԱՅԱՍԱԿԱՆ ԿԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

12 նոյեմբերի 2010թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Մ. Թովուզյանի
Ն. Նազարյանի

Քննության առնելով քաղաքացի Սամվել Նաջիյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Սամվել Նաջիյանը 2010թ. հոկտեմբերի 26-ին դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը ճանաչել ՆՏ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող 143-րդ հոդվածը վերաբերում է վճռի պարզաբանմանը, վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղմանը:

Դիմողի կարծիքով, նշված նորմը սահմանափակում է վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների կողմից կայացված որոշումներին պարզաբանումներ փախու եւ դրանցում փեղ գրած վրիպակներն ուղղելու հնարավորությունը, որի արդյունքում, ըստ դիմողի, խախտվում են քաղաքացու՝ ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու ազատությունները:

2. ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության **մասնակից հանդիսացած** այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, **որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է** որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ Կրկնակի գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

Դիմումին կից ներկայացված վերջնական դատական ակտի՝ ՆՏ վճռաբեկ դատարանի 2010թ. հուլիսի 23-ի որոշման բովանդակությունից ակնհայտ երեւում է, որ այն կայացվել է ոչ թե դիմողի՝ Սամվել Նաջիյանի, այլ մեկ ուրիշ անձի՝ Կարապետ Նաջիյանի բողոքի հիման վրա: Այսինքն՝ ՆՏ սահմանադրական դատարանի դիմելու իրավասու սուբյեկտ հանդիսանում է ոչ թե Սամվել Նաջիյանը, այլ Կարապետ Նաջիյանը:

Ներեւաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Սամվել Նաջիյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

**Նախագահող՝
Անդամներ՝**

